ՀՏԴ : 281.6(091) + 32(479.25)

Doi:10.54503/0135-0536-2022.3-62

ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

(IX դարի առաջին կես)*

ՎԱՐԴԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Բանալի բառեր՝ Հայոց եկեղեցի, արաբ կառավարիչներ, վանք, կրոնական խստացումներ, Բագրատուն Բագրատունի, Դավիթ Բ Կակաղեցի, Հովհաննես Դ Ովայեցի, Մութավաքքիլ, կրոնափոխություն, ապստամբություն, Թոնդրակյան շարժում, նահատակություն:

Նախաբան

Հայերի՝ 774–775 թթ. հակաարաբական հուժկու ապստամբության պարտությունը նոր իրողություններ առաջացրեց Հայաստանում: VIII դ. վերջին ծանր հարված ստացան երկրի ինքնավարությունը մարմնավորող երկու ինստիտուտները՝ նախարարական համակարգը և Հայոց եկեղեցին: Քաղաքական բեմը լքեցին պետականակիր նախարարական տոհմերը՝ Մամիկոնյաններն ու Կամսարականները, որոնք միևնույն ժամանակ եկեղեցու ջերմ աջակիցներն էին: Այս ծանր ժամանակաշրջանում, երբ հայ իշխանների մի մասը երկրից հեռացել էր, իսկ «մնացեալք ղօղեալք դաղարեալ կային ընդ լծով ծառայութեան նոցա»[1], երբ եկեղեցին կորցնում էր իր հարստություններն ու ազդեցությունը, և արտագաղթող հայերի փոխարեն երկրում բնակություն էին հաստատում մուսուլման արաբները, Հայաստանի առաջնորդության դրոշը վերցնում են Բագրատունիները: Վերականգնված հայոց սպարապետությունը նորից անցնում է Բագրատունիներին, որոնք, մեծացնելով իրենց ազդեցությունն Արմինիայի հայկական շրջաններում, հաստատվում են նաև Վիրքում[2]: Սպարապետ է դառնում 775 թ. ապստամբության ժամանակ զոհված Սմբատ Բագրատունու որդի Աշոտ Մսակերը (802–826)[3], ով իր իշխանությունը հաստատել էր Հայաստանի հյուսիսարևմտյան շրջաններում՝ Տայքում, Արշարունիքում, Շիրակում և Աշոցքում: Աշոտ Մսակերը, ով հայ իշխաններից ամենաազդեցիկը, քաջն ու ժողովրդականն էր, հարվածներ է հասցնում թուլացած նախարարական տների հողերին տիրացած արաբական ցեղերին և նրանցից

---

* *Ներկայացվել է 21. VI. 2022 թ., գրախոսվել է 23. VI. 2022 թ., ընդունվել է տպագրության 09. XI. 2022 թ.:*

[1] *Դրասխանակերտցի. 2010, 426: Ասպարեզից հեռացան ու գրեթե վերացան Ամատունի, Ռշտունի, Անձևացի, Գնունի և այլ իշխանական տներ:*

[2] *Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի. 1862, 81–82, Մարկուարտ. 1912, 336, 1913, 287–290, 469–470, Ադոնց. 2006, 478–514:*

[3] Юзбашян. 1988, 54. *Համմտ. Եղիազարյան. 2011, 28: Մատենագրության մեջ «Մսակեր» հորջորջման հեղինակն Ասողիկն է (Ասողիկ. 2010, 707): Նա կրել է նաև «Քաջ» մականունը:*

ետ գրված կալվածքներում հավաքում է այս ու այն կողմ ցրված հայերին: Վարդան պատմիչը հիշում է նման մի դեպք՝ կապված Գնունիների հետ, որոնք մեծ նեղություններ էին կրում Աղիովիտում հաստատված արաբական Ութմանիկ ցեղից և արաբ իշխանություններից: 790-ական թվականներին նրանք խնդրում են Աշոտ Մսակերին «թափել զնոսա յԻսմայելացւոցն»: Վերջինս ընդառաջում է նրանց և «երթեալ հազար արամբ յԱղիովիտ գաւառ, և առ ինքն գումարեալ զամենայն ազգն ախիւն իւրեանց, տանի բնակեցուցանէ ի Տայս»[4]:

Կառուցվածքային փոփոխությունները Հայոց եկեղեցու համակարգում

IX դ. սկզբներին հետզհետե կանգ է առնում Հայաստանի անկման ընթացքը, և սկիզբ դրվում երկրի ներքին ինքնավարության վերականգնմանը: Նախարարական համակարգի հետ կառուցվածքային փոփոխությունների է ենթարկվում նաև Հայոց եկեղեցու ավատատիրական հենքը: Նախկինում՝ IV–VIII դարերում, Հայաստանի ամեն մի եպիսկոպոսական վիճակ ուներ իր որոշակի հողային տարածությունները, որոնք կառավարվում էին գյուղական հոգևորականության կողմից: Արդեն VIII դարավերջերից ու IX դ. եպիսկոպոսական վիճակներին պատկանող և գյուղական հոգևորականությանը ենթակա հողերն աստիճանաբար անցնում են օրեցօր հզորացող վանքերին: Դեռևս վաղ միջնադարից գոյություն ունեցող վանքերի կողքին ձևավորվում են նորերը, որոնք շրջակա խոպան հողերի ու անտառային մարգագետինների մշակման ու յուրացման հաշվին մեծ չափով ընդլայնում են իրենց տարածությունները[5]: Նշված փոփոխությունները կառուցվածքային նոր տեսք են տալիս եկեղեցու տնտեսական հիմքը կազմող ավատական հողատիրությանը: IX դ. արաբ պատմիչ Բալազուրին հիշում է Սյունիքում գտնվող մի վանքի մասին, որը կոչվում էր «Բաժակների (սկիհ) վանք (Դայր ալ-Ակդահ), և Հայաստանի քրիստոնյաներն այն շատ էին մեծարում ու պարգևներ ընծայում»[6]: Գեղարքունիքում հայտնի էր Մաքենյաց վանքը, որը պատմիչը կոչում է «զմեծ մայրաքաղաքն Մաքենացւոց»[7]: Նույն ժամանակաշրջանում է հիմնադրվում և նշանակալի զարգացում ապրում միջնադարյան Հայաստանի նշանավոր հոգևոր-մշակութային կենտրոն Սևանա վանքը: Աղբակում հայտնի էին Սուրբ Խաչ ու Վարագա վանքերը[8]: Նվիրատվությունների և գնումների միջոցով տարբեր վայրերում առաջացած վանքերը ձեռք էին բերում բազմաթիվ գյուղեր, կալվածքներ ու հասութաբեր այլ հաստատություններ, որոնք դառնում էին նրանց եկամտի հիմնական աղբյուրները: Վանքերը հատուկ ուշադրություն էին դարձնում իրենց տնտեսության բարեկարգմանը, ոռոգելի էին դարձնում և մշակում անջրդի հողերը: Ուշագրավ վկայություն է պահպանվել Թալինի Մայր տաճարի ՄԼԲ (783) թվականի վիմագիր արձանագրության մեջ, որտեղ հիշատակվում է Ուխտատուր վանականի՝ ջուր բերելու (ջրանցք

[4] Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի. 1862, 77:
[5] Գրիգորյան. 1973, 23:
[6] Բալազուրի. 2005, 282:
[7] Կաղանկատուացի. 1983, 327:
[8] Արծրունի եւ Անանուն. 2010, 215, 226, 228:

անցկացնելու) մասին[9]: Անհրաժեշտ ենթակառուցվածքներով համալրվող վանքերում կազմակերպվում էին եկեղեցական միաբանություններ, որոնք VIII–IX դդ. դառնում են հայ հոգևորական դասի ձևավորման հիմք: Այդ շրջանից սկսած՝ հոգևորականն այլևս չէր կարող թողնել եկեղեցական ծառայությունը՝ զինվորական ասպարեզ մտնելու համար: Շեշտվում է նաև կուսակրոն հոգևորականության դերը[10]:

Խնդրո առարկա ժամանակաշրջանում Հայոց եկեղեցին, պարբերաբար ենթարկվելով իսլամի գրոհներին, միաժամանակ ենթակա է եղել հույների ճնշումներին, որոնք պարտադրում էին ընդունել Քաղկեդոնի եկեղեցական ժողովի որոշումները: Այս երկու հոսանքներին ընդդեմ, դավանաբանական վեճերի պայմաններում VIII դ. կեսերից եկեղեցին ամրապնդում է իր տեսական հիմքերը, ստեղծում ինքնուրույն օրենսդրություն: Հայոց եկեղեցու ծիսադավանական և աստվածաբանական սկզբունքների հստակ սահմանումը նպաստում է ազգային ու կրոնական ինքնության գիտակցման զարգացմանը: «VIII դարից ի վեր, հայկական պաշտոնական ծիսական գրքերում, հիրավի, սկիզբ է առնում տոնական օրացույցի աչքի զարնող առաջընթացը, որն ի հայտ է բերում ազգային զգացողության կրկնապատկումը»[11],– գրում է Ֆրանսիացի հոգևորական Շառլ Ռենուն:

Արաբների կրոնական խստացումները

Ազգային օրենսդրության ստեղծման և ինքնության ամրապնդման Հայոց եկեղեցու ձեռնարկները չէին կարող չանհանգստացնել արաբ կառավարիչներին ու ճշգրտումներ չմտցնել հայերի նկատմամբ վարվող կրոնական քաղաքականության մեջ: Եթե Օմայանների ժամանակ արաբներն ունեին «համբերատար վերաբերմունք եկեղեցու նկատմամբ»[12], ապա VIII դ. սկզբից, մասնավորապես՝ Հիշամ խալիֆի ժամանակներից (724–743), այդ քաղաքականությունը փոխվում է: Հայ կղերական դասը ենթարկվում է հարկադրանքի, իսկ VIII դ. վերջից Հայաստանի հարուստ վանքերն ու եկեղեցիները դառնում են կողոպուտի և հարստահարման օբյեկտ: Արաբներն առիթ էին որոնում վանքերից և նույնիսկ Դվինի հայրապետանոցից որևէ կալվածք կամ ունեցվածք խլելու: IX դ. սկզբներից թալանի և կողոպուտի հետ նաև խստանում է արաբների կրոնական անհանդուրժողականությունն ու առաջնային դառնում հավատափոխության գործոնը: Նույն դարի կեսերին է վերաբերում արաբ պատմիչի խոստովանական վկայությունը Հայաստանի քրիստոնյաների կողմից մեծարված և նրանց համար ուխտատեղի դարձած Բաժակների վանքում (Դայր ալ-Ակդահ) արաբ զորավարի իրականացրած թալանի մասին. «Սա հափշտակեց ամբողջ ունեցվածքը և բռնություն գործադրեց նրա մարդկանց

---

[9] *Հ ո վ ս ե փ յ ա ն. 1913, 176:*

[10] *Հայ ժողովրդի պատմություն. 1984, 369:*

[11] *Ռ ե ն ո ւ. 2008, 88: Թե՛ վարդապետական, թե՛ ծիսական ասպարեզներում բարենորոգման այս գործընթացի նախաձեռնողներն էին եկեղեցու նշանավոր հայրեր Հովհան Օձնեցին (717–728), Արշարունյաց եպիսկոպոս Գրիգորիսը (650–730), Խոսրովիկը (VIII դ. առաջին կես), Սողոմոն Մաքենացին (VIII դ.), որոնք մշակում են Հայ եկեղեցու ինքնուրույն օրենսդրությունը, սահմանում եկեղեցական կարգը, որը գործում է առ այսօր:*

[12] *Մ ա ն ա ն դ յ ա ն. 1978, 581:*

(վանականների) նկատմամբ»[13]*: Բուղայի արշավանքների ժամանակ, ինչպես հաղորդում է Թովմա Արծրունին, արաբները հարկատու էին դարձրել Վարագա վանքի միաբաններին*[14] *ոտնահարելով վանական-եկեղեցական կալվածքների ապահարկության իրավական նորմը:*

IX դ. առաջին կեսին քրիստոնեության ու նրա հետևորդների նկատմամբ արաբների վարած քաղաքականության վրա զգալի էր օրվա տիրակալի սուբյեկտիվ վերաբերմունքը, որը բխում էր նրա աշխարհայացքային պատկերացումներից և արժեքային համակարգից: Ժողովրդական բանահյուսության մեջ բարեպաշտ թագավորի առաքինություններով օժտված Հարուն ալ Ռաշիդի (785–809) հրամանագրով քրիստոնյաները ոչ միայն զրկվում են զբաղեցրած պաշտոններից, այլև պետք է հագնեին մուսուլմաններից տարբերվող հագուստ, իսկ նրանց եկեղեցիները ենթակա էին քանդման[15]*: Սակայն արգելքներ չկային սովորական կրոնական ծեսերի և տոների կատարման կապակցությամբ: «Հարունի ժամանակ,– գրում է բրիտանացի արաբագետ Ա. Թրիթոնը,– ընդունված պատկերացումն այն էր, որ քրիստոնյաների որոշ կրոնական արարողություններ իրականացնելու իրավունքը այնքան հնուց է գալիս, որ անպատեհ է դրան հակադրվելը, որքան էլ որ մեծ լինի մուսուլմանների դժգոհությունը»*[16]*: Հարունի հաջորդ Մամուն խալիֆը (813–833)*[17] *համեմատաբար բարեհաճ մոտեցում ուներ քրիստոնյաների նկատմամբ, սակայն Եգիպտոսում քրիստոնյա ղպտիների ընդվզումներից հետո նրա վերաբերմունքը փոխվում է:*

Կրոնական խստացումները բարձրակետին են հասնում Մութավաքքիլ խալիֆի օրոք (847–861), ով «մարմնացնում էր ամենամռայլ մի ռեակցիա իսլամական առաջադիմության դեմ»[18]*: Նրա կառավարման սկզբնական, բայց շատ կարճ շրջանում քրիստոնյաների վիճակը մասնակիորեն բարելավվում է. վերջիններիս կրկին թույլատրվում է զբաղեցնել պետական պաշտոններ: Սակայն դրությունը շատ արագ փոխվում է, և խալիֆը 849 թ. վերացնում է քրիստոնյաներին պաշտոնների նշանակելու թույլտվությունը: Նրա հրամանով քանդվում են բոլոր նորակառույց եկեղեցիները, իսկ նորերի կառուցման վրա՝ արգելք դրվում*[19]*: Զիմմիների*[20] *համար նա սահմանում է տարբերվող հագուստ.*

---

[13] *Բ ա լ ա զ ո ւ ր ի. 2005, 282: Արաբագետ Ա. Տեր-Ղևոնդյանի կարծիքով՝ 851 թ. արաբների դեմ հայերի ընդվզման պատճառը հենց այս վանքի կողոպտումն էր Ալա զորավարի ձեռքով* (Т е р-Г е в о н д я н. 1977, 142)*:*

[14] *Ա ր ծ ր ո ւ ն ի եւ Ա ն ա ն ո ւ ն. 2010, 215, 226, 228:*

[15] Г и р г а с. 1865, 71.

[16] T r i t t o n. 1970, 114. *Լինում էին դեպքեր, երբ քրիստոնյաների կրոնական տոնակատարություններին մեծ բազմություն էր միանում* (T r i t t o n. 1970, 114)*:*

[17] *Աբուլ-Աբաս Աբդալլահ ալ-Մամունը Հարուն ալ-Ռաշիդի որդին է, հայտնի է որպես գիտությունների հովանավոր: Քրիստոնյաներին ազատեց մի շարք պարտականություններից* (T r i t t o n. 1970, 170, 218)*:*

[18] *Լ ե ո. 1967, 428:*

[19] *Յ ա կ ո ւ բ ի. 2005, 392–393,* Г и р г а с. 1865, 71.

[20] *Իսլամական իրավունքը խալիֆայության հպատակներին բաժանում էր երեք խմբի՝ մահմեդականներ, զիմմիներ (հովանավորյալ) և ստրուկներ* (Г и р г а с. 1865, 25)*: Զիմմիները նրանք են, որոնք օգտվում են Զիմմայից, իսկ Զիմման անվերջ նորոգվող պայմանագիր է, որի միջոցով մուսուլմանական համայնքն ա-*

պետք է հագնեին դեղին վերնազգեստ և չկրեին սպիտակ հագուստ[21]: Գլխահարկը կրկնապատկվում է, արգելվում է քրիստոնյաների մուտքը մուսուլմանական բաղնիք: Իր կառավարման ամբողջ ընթացքում Մութավաքքիլը շարունակաբար մեծացնում էր ճնշումները քրիստոնյաների նկատմամբ. արգելվում էր ձի հեծնել, նրանք կարող էին օգտվել միայն ավանակից կամ ջորուց: Նրանց տների վրա ամրացվում էին սատանայի պատկերով փայտե տախտակներ, իսկ գերեզմանները պղծում էին՝ հավասարեցնելով հողին[22]: Խալիֆի հրամանով նաև արգելվում էին երթերի ժամանակ խաչեր կրելը և փողոցում ժամերգություն կատարելը[23]: «Օմար II-ը և Մութավաքքիլը փորձում էին ճնշել քրիստոնեության նույնիսկ ամենասովորական դրսևորումները, բայց չեն հաջողում»[24],– գրում է Ա. Թրիթոնը:

Հայոց եկեղեցու առջև ծառացած մարտահրավերները Դավիթ Բ Կակաղեցու օրոք

Հովսեփ Բ Փարպեցուց հետո՝ 806 թ., կաթողիկոս է ընտրվում Դավիթ Բ Կակաղեցին: Նա Մազազ գավառի Կակաղ գյուղից էր[25]: Դավիթ Բ-ի երկարատև ամոռակալության վերաբերյալ տեղեկությունները չափազանց սուղ են, մինչդեռ նա պաշտոնավարել է Հայոց եկեղեցու նկատմամբ արաբների գործադրած սաստիկ ճնշումների և բռնությունների ժամանակաշրջանում: Կարծում ենք, որ տեղեկությունների բացակայությունն արդյունք է եկեղեցու իրավասությունների էական սահմանափակման և կաթողիկոսական ինստիտուտի ինքնուրույնության նվազման: Հայոց հոգևոր կառույցի նկատմամբ արաբների գործադրած ճնշումները հասկանալիորեն սահմանափակում էին հայ եկեղեցականների նախաձեռնությունները՝ վերջիններիս մղելով լոկ կրավորական գործունեության: Այդուհանդերձ, պահպանված կցկտուր տեղեկությունները վկայում են, որ այդ շրջանում Հայաստանում տեղի են ունեցել եկեղեցական-կրոնական խմորումներ: IX դ. առաջին քառորդին՝ Աշոտ Մսակերի ժամանակ (802–826), Հայաստան է եկել ասորի միաբնակ եկեղեցու հեղինակավոր պաշտոնյա, գիտնական Նանա սարկավագը: 812–813 թթ. Աշոտ Մսակերը պատվիրել է նրան գրել Հովհաննու Ավետարանի համառոտ մեկնությունը: 813–816 թթ. Նանան արաբերենով գրել է Ավետարանի մեկնությունը և ընծայել Աշոտի որդի Բագարատ Բագրատունուն[26]: Հայաստանում սարկավագը պայքար է տարել քաղկեդոնական Եպիկուրոս անունով հույն եպիսկոպոսի դեմ, որը փորձում էր Հայոց իշխան Աշոտ Մսակերին դարձնել քաղկեդոնական

պահովում է հյուրընկալություն և պաշտպանվածություն այլ կրոնների հետևորդների համար, որոնք ընդունել են իսլամի գերիշխանությունը (Աբու Յուսուֆ. 2005, 118, ծանոթ. 13, Tritton. 1970, 50)*:*

[21] Гиргас. 1865, 71.

[22] Гиргас. 1865, 71; Tritton. 1970, 107.

[23] Tritton. 1970, 107.

[24] Tritton. 1970, 114.

[25] *Հայր Ալիշանը Կակաղը կասկածանքով նույնացնում է հետագայի Քյոթուզ գյուղին: Հիշատակվում է Ակաւղից, Ակողից, Ակաւից ձևերով (Ալիշան. 1890, 371):*

[26] *Ակինյան. 1922, 131–132:*

եկեղեցու հետևորդ: Նանան հակաճառություն է սկսում Եպիկուրոսի դեմ և հերքում վերջինիս աստվածաբանական տեսությունները[27]: Ասորի միաբնակ եկեղեցու հեղինակավոր պաշտոնյա Նանայի՝ Հայաստան ժամանման փաստը վկայում է լուրջ առաքելության մասին: Ենթադրվում է, որ փորձ էր կատարվում ստեղծել հայ և սիրիական եկեղեցիների միություն, ձևավորել ընդհանուր «ռազմաճակատ» քաղկեդոնականության դեմ:

Դավիթ Բ-ի օրոք Հայաստանի ինքնավարության վերականգնման ոչ դյուրին ընթացքն ուղեկցվում է խալիֆայական իշխանության գերակայությունը չճանաչող տեղական կառավարիչների ապստամբություններով, որոնք մեծ ավերածություններ էին պատճառում Հայաստանին: Սևադա անունով մի պարսիկ իշխան, «ի տանէ Ջահապայ»[28], ընդվզում է խալիֆայության դեմ՝ փորձելով հաստատել սեփական անկախ իշխանությունը և դրանում ներառել նաև Հայաստանի հյուսիսային գավառները: Նա ամուսնացած էր Բագրատունյաց Արուայակ իշխանադստեր հետ և փորձում էր իրավունքներ իրացնել հայկական հողերի նկատմամբ: Հովհաննես Դրասխանակերտցու հավաստմամբ, կնոջ անունով «զյոլով մասն երկրիս բռնակալեալ սեպհականաբար իմն տիրէր»[29]: Մարտնչելով արաբական տիրապետության դեմ՝ Սևադան հանդես էր գալիս որպես հայերի պաշտպան: Նա գործողություններ է ձեռնարկում Իսա իբն Խալիդ անունով[30] նոր նշանակված ոստիկանի դեմ: Աշոտ Մսակերի գլխավորությամբ հայ նախարարների մի մասը պայքար է սկսում Սևադայի դեմ և խափանում որոշ հայկական կալվածքների գավթումը: Խալիֆը, ի նշան չնորհակալության, Սամառայում պատանդության մեջ պահվող Աշոտի որդի Սմբատին վերադարձնում է հորը[31]: Մ. Օրմանյանի հաշվարկներով՝ այս դեպքերը տեղի են ունեցել 822 թ.՝ Մամուն ամիրապետի օրոք[32]: Սակայն Սևադային հաջողվում է իր կողմը գրավել մի քանի նշանավոր հայ ազնվականների, «ընդ որս էր եւ մեծ սպարապետն Հայոց Սմբատ, եւ Սիւնեաց տէր եւ այլ եւս ազատագունդ տեարք»[33]: Հայաստանում արաբական իշխանություններին սպառնացող վտանգները չեզոքացնելու համար Խալիդը դիմում է տարբեր միջոցների՝ ընդհուպ խոստանալով Սևադային Հայաստանի կառավարչի

---

[27] *Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի. 1862, 78:*

[28] *Մանազկերտի կայսիկ էմիր Ջահապն ամուսնացած էր Մուշեղ Մամիկոնյանի դստեր հետ: Նա հանդես էր գալիս որպես Մամիկոնյանների ունեցվածքի, այսպես ասած, օրինական ժառանգորդ և կռիվ սկսեց Բագրատունիների դեմ (Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի. 1862, 78):*

[29] *Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի. 2010, 427:*

[30] *Հայկական սկզբնաղբյուրներում Իսա իբն Խալիդ ոստիկանը հիշվում է Հոլ անունով: Արաբական մատենագրության մեջ նման անուն չի նշվում: Սա Իսա իբն Մուհամմադ Աբի Խալիդն է (820–823), որը Հայաստանում հաղթել է Սևադա Ջահ-հաֆիին (Ֆ ա ս մ էր. 1929, 656, Տ ե ր-Ղ և ո ն դ յ ա ն. 1977, 125): Հ. Նալբանդյանը կարծում է, որ «Հոլ» անունը Խալիդը ստացել է Հայաստանում գործած դաժանությունների պատճառով, որովհետև արաբերեն «հալ» նշանակում է սարսափ (Ն ա լ բ ա ն դ յ ա ն. 1956, 118):*

[31] *Ա ս ո ղ ի կ. 2010, 707:*

[32] *Օ ր մ ա ն ե ա ն. 2001, 1074, §634:*

[33] *Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի. 2010, 427:*

պաշտոնը[34]: Միաժամանակ Խալիդը փորձում էր խաթարել հայ նախարարների և պարսիկների միջև ձևավորված համաձայնությունն ու Սևադային ասպարեզից հանել հայերի ձեռքով: Նա Դավիթ կաթողիկոսին որպես բանագնաց ուղարկում է Սմբատի և Սահակի մոտ՝ համոզելու նրանց ետ կանգնել Սևադայի հետ գործակցելու մտքից: Դավիթ կաթողիկոսը հանդիպում է Սևադային ու փոխանցում ոստիկանի խոսքը. «Ընդէ՞ր եւ կամ վասն է՞ր իմիք այդպէս զաւշաքաղութեամբ իմիք հպարտացեալ խրոխտայք դաւել զիս. թէ ոչ զիս, ասէ, կամիք ընդունել, վայրացդ ելիցդ իմ տեղի տու՛ք ի բաց գնալով, զի ի ձենջ աներկիւղաբար չու արարեալ, երթալ գնացից»[35]: Սակայն կաթողիկոսի ջանքերը՝ համոզելն ու աղաչանքները, արդյունք չեն տալիս. Սևադայի և հայ նախարարների դիրքորոշումը չի փոխվում, իսկ հայրապետը «յաւետ տրտմեալ» վերադառնում է: Հարցը խաղաղ ճանապարհով լուծելու բոլոր հնարավորությունները սպառելուց հետո Խալիդը, «ի պատրաստութիւն զինուց իբրեւ երկու հազար», զորքով շարժվում է նրանց դեմ և ճակատամարտ տալիս Հրազդանի հովտում գտնվող Կավակերտ գյուղի մոտ: Այդտեղ ընկնում է Սահակ Սյունին, իսկ Սևադան և Սմբատը «հազիւ ճողոպրեալք անձնապուրծ փախչէին»[36]: Ջախջախելով հակառակորդին՝ Խալիդը դադարեցնում է պատերազմը և վերջ տալիս վրեժխնդրությանը: Նա նույնիսկ թույլ է տալիս պատվով հողին հանձնել Սահակ Սյունու մարմինը: Այդ մասին վկայություն է փոխանցում Սյունյաց պատմիչը. «Իսկ երանելի հայրապետն Դաւիթ լուեալ՝ անհնարին ողբով հեծեծէր. և ընթացեալ բազմամբոխ պաշտօնէիւք կազմէր զդագաղն արքայակերպ և բարձեալ զմարմինն մեծահանդէս պաշտամամբք, սաղմոսիւք և օրհնութեամբ բերեալ ի կաթողիկոսարանն ի Դուին՝ դնէ ի քնարանի մերձ ի սուրբ քաւարան կաթողիկոսարանին»[37]: Արաբ հեռատես պաշտոնյան մեծահոգաբար Սմբատին չի զրկում տիրույթներից և իշխանական պատիվներից: Ոստիկանի այս մեղմ վերաբերմունքի պատճառը, ըստ Մ. Օրմանյանի, Դավիթ կաթողիկոսի միջնորդությունն էր[38]: 833 թ.՝ 27 տարի պաշտոնավարելուց հետո, «լցեալ հայրապետին զկէտ կենաց իւրոց՝ վախճանի»[39]:

---

[34] *Ադոնց. 2006, 452:*

[35] *Դրասխանակերտցի. 2010, 427–428:*

[36] *Կավակերտի ճակատամարտը, հավանաբար, տեղի է ունեցել 829–832 թվականներին՝ Խալիդի երկրորդ պաշտոնավարման շրջանում (Նալբանդյան. 1956, 119,* Тер-Гевондян. 1977, 135)*: Պատմաբան Ա. Եղիազարյանը ենթադրում է, որ Սևադան ապստամբել է երկու անգամ՝ առաջինը՝ 820–823 թթ., իսկ երկրորդը՝ 829–832 թթ. (Եղիազարյան. 2010, 163):*

[37] *Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական. 1861, 122, Դրասխանակերտցի. 2010, 428:*

[38] *Օրմանեան. 2001, 1076, §635:*

[39] *Դրասխանակերտցի. 2010, 428: Ասողիկի երկում Դավիթ Կակաղեցու պաշտոնավարման տևողությունը նշված է ԻԵ (25) տարի ԻԷ-ի (27) փոխարեն (Ասողիկ. 2010, 706): Ենթադրելի է, որ սա Ե և Է տառերի ձեռագրական շփոթի հետևանք է: Դավիթ Կակաղեցու երկարատև պաշտոնավարության ժամկետը՝ 806–833 թթ., մեծ մասամբ համընկնում է Մամուն խալիֆի գահակալության տարիներին (810–833):*

Դավիթ Կակաղեցու աթոռակալության ժամանակաշրջանին վերաբերող ուշագրավ մի վկայություն է պահպանվել XIII դ. ժամանակագիր Մխիթար Այրիվանեցու երկում: Այն որոշակի լույս է սփռում թոնդրակյան աղանդի ձևով եկեղեցու դեմ ուղղված շարժման սկզբնավորման խնդրահարույց փուլի վրա և վկայում Դավիթ Կակաղեցու օրոք առկա մարտահրավերների մասին: 821 թ. ներքո Այրիվանեցին արձանագրում է. «Սմբատ Աբլաբասայ. սա է նախնին թոնդրակեցոց աղանդին»[40]: Ստեփանոս Սյունեցու վկայաբանության մեջ, որի հեղինակը դարձյալ Այրիվանեցին է, կարդում ենք. 822 թվականին «Սուրբն Ստեփաննոս կայր ի կաթողիկոսարանին և լուսաւորէր զամենեսեան բանիւ վարդապետութեան իւրոյ. հանդիպեցաւ նմա հակաճառութիւն ընդդէմ Սմբատայ երկաբնակի, որ էր սպարապետ հայոց և դավանակից յունաց, զոր յետոյ, մահուան թրւին ի համանուն թոռնէ սորա յայտնեցաւ աղանդն Թոնդրակեցոց, յաւուրս Դաւթի կաթողիկոսի Կակաղեցոյ, եւ ի սոյն աւուրս բաժանեցան ի հայոց ազգն Ծաղ ի ձեռն Փարսմանայ ումեմն փառամոլ քահանայի, որպէս պատմէ սուրբն Ուխտանէս եպիսկոպոսն Սեբաստիոյ»[41]: Վկայաբանության մեջ սպարապետ Սմբատ Բագրատունու (752–775) թոռը՝ Սմբատ Աբլաբասը (Խոստովանող), հանդես է գալիս որպես Սյունեցու քաղկեդոնիկ հակառակորդ: «Ըստ երևույթին այն հանգամանքը, որ հայադավան հեղինակների պատկերացումով քաղկեդոնականությունը հաճախ նույնպես որպես հերձված կամ աղանդ էր նշվում,– գրում է պատմաբան Ա. Հովհաննիսյանը,– առիթ է ծառայել Այրիվանեցուն քաղկեդոնականության հարած Սմբատ Աբլաբասին շփոթել թոնդրակյան աղանդի հիմնադիր Սմբատ Զարեհավանցու հետ»[42]: Այրիվանեցու պատկերացումով 822–855 թթ. Հայաստանում իշխած Սմբատ Բագրատունին և սրա ժամանակ գահակալած կաթողիկոսն ու թոնդրակում ծայր առած աղանդի հիմնադիր Սմբատ Զարեհավանցին ժամանակակիցներ էին: Վերոբերյալ վկայությունը ցույց է տալիս, որ Այրիվանեցու համար աղբյուր է հանդիսացել Ուխտանեսի պատմության՝ մեզ չհասած երրորդ գիրքը, որից նա առել է հունադավան հայերի՝ ծաղերի մասին հաղորդած տեղեկությունները[43]: Քաղկեդոնական Փարսման քահանայի ակտիվ գործակցությամբ «Ծոնդէացիսն», որոնք բնակվում էին Հայաստանի՝ Աղվանքին սահմանակից շրջաններում Հայոց եկեղեցուց Վրաց եկեղեցու գիրկն են անցնում[44]: Անունների շփոթությամբ հանդերձ Այրիվանեցու վկայությունը

---

[40] *Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն հայոց. 1860, 54:*

[41] *Յ ո վ ս է փ ե ա ն ց. 1931, 19: «Յաւուրս տէր Դաւթի Փարսման քահանայ թվականի կակաղեցի որոշեալ ի հայոց ի Վիրս դարձոյց զԾոնդէացիսն, այս է Ծաղն, որ կան այժմ ի հռոմս» (Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն հայոց. 1860, 54):*

[42] *Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1957, 340:*

[43] *X–XI դդ. պատմիչ Ուխտանես եպիսկոպոսի «Պատմութիւն հայոց» երկասիրությունը բաղկացած է երեք մասից: Համաձայն նրա պատմության ընծայականի՝ երրորդ մասը նվիրված է եղել ծաղերի, նրանց երկրի, քաղաքների, վանքերի և մկրտության պատմությանը:*

[44] *Ըստ Ն. Ադոնցի՝ Մխիթար Այրիվանեցին սխալվում է՝ նույնացնելով ծոնդեացիներին ծաղերի հետ: Ծոնդեացիները քրիստոնյաներ էին և IX դ. հարում են Վրաց եկեղեցուն, մինչդեռ ծաղերը, որոնց մասին խոսում է Ուխտանեսը, միայն X դ. վերջին դարձան քրիստոնյա (Ա դ ո ն ց. 2006, 541): Ն. Մառը ենթադրում է՝ ծաղերը*

կարևոր է այնքանով, որ Թոնդրակյան աղանդի սկիզբը հստակ թվագրվում է IX դ. առաջին կեսին: Ակներև են դառնում քաղկեդոնականների, մասնավորապես՝ Վրաց եկեղեցու գործնական քայլերը Հայոց եկեղեցու դավանանքի հետևորդներին իրենց կողմը գրավելու ուղղությամբ: Քաղկեդոնականություն ընդունած հայերը հետզհետե սկսում են ապազգայնանալ, ձուլվել վրացիների, հույների և սիրիացիների հետ[45]*:*

Դավիթ Բ կաթողիկոսի ալթոռակալության ժամանակաշրջանը նշանավոր է նաև քրիստոնեական կրոնի համար անձնուրաց նահատակության բազմաթիվ օրինակներով, որոնք պահպանվել են վկայաբանական երկերի էջերում: Անձնազոհության այդպիսի դրվագ է Հովսեփ ու Սահակ իշխանների նահատակությունը, որոնց հետագայում եկեղեցին սրբադասել և տոն է սահմանել նրանց պատվին: Կայսիկ ցեղի արաբ իշխաններից մեկը հաստատվում է Կարինում և ամուսնանում տեղի մի հայ քրիստոնյա աղջկա հետ: Նրանք ունենում են երեք որդի, որոնց բարեպաշտ կինը դաստիարակում է քրիստոնեական հավատով և ծեսերով[46]*: Հովսեփը, Սահակը և երրորդ զավակը, որի անունը պատմությունը չի պահպանել մեծանում են որպես քրիստոնյաներ՝ կրելով իսլամական Յուսուփ և Իսակ անունները: «Հասունանալով»՝ Հովսեփն ամուսնանում է, ունենում զավակներ, սակայն շուտով բացահայտվում է մուսուլմանի քրիստոնեացած զավակների գաղտնիքը: Եղբայրները փորձում են փախչել Բյուզանդիա: Ինչպես վկայում է նահատակների վարքը, այդ գործում նրանց փորձում է օգնել իշխան Քուրդիկ Մամիկոնյանը*[47]*: Սակայն արաբական իշխանությունները խափանում են նրանց փախուստը, և եղբայրները ձերբակալվում են: Իսլամի օրենսգետները փորձում են նրանց համոզել հրաժարվել քրիստոնեությունից. անգամ հայրը հորդորում է առերես ընդունել և հետո անցնել հույների երկիր, սակայն եղբայրները մնում են անդրդվելի՝ ասելով. «Քրիստոնեայ եմք, և արհամարհեցաք զմոլար սնոտի ուսմունս մեր հայրենի (նկատի ունի իսլամը – Վ. Ա.)»*[48]*: Իսլամն ուրանալու համար տեղական դատավորի վճռով եղբայրները դատապարտվում են գլխատման Կարինի քաղաքապետի կողմից, որ «զիշխանութիւն ունէր քաղաքին և գաւառին Կարնոյ»*[49]*: Նրանց մահվան վճիռը, ինչպես հավանական է համարում Օրմանյան սրբազանը, իրագործվել է տեղական դատավորի ձեռքով՝ առանց ոստիկա-*

քաղկեդոնիկ հայեր են, որոնք ապրել են հարավային Հայաստանում, իսկ ծոնդեացիները, որպես ազգակից ժողովուրդ, ապրել են հյուսիսարևելյան Հայաստանում: Այս աշխարհագրական շրջանը համապատասխանում է վրացիների միսիոներական գործունեության շրջանին (Mapp. 1905, 30–31, *ծանոթ. 2*)*: Ն. Ակինյանը, ըստ էության, տարբերակում չի դնում «ծաղ»-երի և «ծաւդեացի»-ների միջև: Գտնում է՝ նրանք ազգությամբ հայ էին, որոնք ընդունել են քաղկեդոնականություն (Ակինեան. 1910, 77–79):*

[45] *Լեո. 1967, 460:*

[46] *Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց. 1813, 293, Յայսմաւուրք. 1706, Արացի ժե, Յունվարի իբ:*

[47] *Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց. 1813, 295:*

[48] *Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց. 1813, 296:*

[49] *Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց. 1813, 295:*

նի մասնակցության[50]: Եղբայրների նահատակությունը տեղի է ունեցել 808 թվականի արաց ամսի 15-ին[51] «յաւուր հինգշաբթու»[52]:

Հայաստանի ներքին ինքնավարության ամրապնդումը Հովհաննես Դ Ովայեցու օրոք

833 թ. Դավիթ Բ Կակաղեցուն փոխարինում է Հովհաննեսը Դ-ն՝ Կոտայք գավառի Ովայք գյուղից, որին Վարդան պատմիչը բնութագրում է որպես «այր սուրբ և պարկեշտ»[53]: Թովմա Արծրունին նրան որակում է իբրև եկեղեցական և բարոյական բարեկարգության նախանձախնդիր հայրապետ, որը «յաւետ հրաշիւք յաւրինէր զկարգս սրբոյ եկեղեցւոյ ուղղափառ առաքելական հաւատոց ի Տէր Հիսուս Քրիստոս»[54]: Շեշտվում է, որ նրա խստապահանջությունները հաճելի չէին շատերի, այդ թվում՝ իշխանների համար, որովհետև նա «ընէր ուխտս ընդ իշխանս աշխարհիս Հայոց», հորդորում էր արժանի լինել քրիստոնեական պատգամներին, որպեսզի «վկայեսցէն ըստ անուան քրիստոնէութեանն եւ գործքն»[55]:

Հովհաննես կաթողիկոսի ընտրությունը հարթ չի ընթացել, որովհետև այդ հարցում հայ նախարարների շրջանում համաձայնություն չի եղել: Տարոնի և Սասունի իշխան Բագարատ Բագրատունին (826–851), ով «հրամանատար եւ իշխան իշխանացս Հայոց գտանէր», դժգոհ է մնում այդ ընտրությունից, որովհետև «առանց կամաց նորա եղեւ հայրապետին հաստատութիւն»[56]: Բագարատն այդ ժամանակ այնքան ուժեղ էր, որ խալիֆից նույնիսկ պահանջում էր Արմինիայի ոստիկանի լիազորությունները[57]: Նա միշտ աչքի է ընկել կրոնական ու եկեղեցական խնդիրներով իր հետաքրքրվածությամբ և ի սկզբանե համաձայն չէր Հովհաննես Ովայեցու ընտրությանը: Բայց, ինչպես կարծում է Ա. Տեր-Ղևոնդյանը, Բագարատ և Սմբատ Բագրատունի եղբայրների միջև

---

[50] *Օրմանեան. 2001, 1073, § 633:*

[51] *Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի. 1862, 91: Այս օրը համապատասխանել է շարժական տոմարի հոկտեմբերի 19-ին, մինչդեռ Յայսմավուրքն անշարժ տոմարով այն դնում է հունվարի 22-ին (Յայսմաւուրք. 1706, Արացի ժե, Յունվարի իբ):*

[52] *Անեցի եւ շարունակողներ. 2014, 161:*

[53] *Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի. 1862, 80:*

[54] *Արծրունի եւ Անանուն. 2010, 146:*

[55] *Արծրունի եւ Անանուն. 2010, 146–147:*

[56] *Դրասխանակերտցի. 2010, 429: Թովմա Արծրունին նշում է նրա բարձր կարգավիճակը հայ իշխանների մեջ. «Իշխան Տարունոյ Բագարատ, վասն զի ունէր յայնժամ զգլխաւորութիւն բարձակցութիւն իշխանաց Հայոց» (Արծրունի եւ Անանուն. 2010, 141): Վարդան պատմիչը Բագարատին կոչում է «իշխան Տաւրոս լերինն» (Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի. 1862, 80): Ստեփանոս Օրբելյանի երկում նա անվանվում է «իշխանն Հայոց» (Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական. 1861, 122): Մ. Զամչյանը նրան բնութագրում է որպես «այր հզօր և երևելի» (Զամչյան. 1984, 441): Մ. Օրմանյանն իրավացիորեն կարծում է, որ Բագարատը Հայաստանում պատրիկության պաշտոնով եղել է արաբ ոստիկանի տեղակալը, իսկ հայոց սպարապետությունը վարել է Սմբատը (Օրմանեան. 2001, 1084, §640):*

[57] *Եղիազարյան. 2011, 31, 92:*

հարաբերություններն այդ ժամանակ այնքան լարված էին, որ Բագարատը հնարավորություն չուներ միջամտելու նոր հոգևոր առաջնորդի ընտրությանը, ինչպես նաև չէր խառնվում Հայաստանի հյուսիսային և հյուսիսարևելյան շրջանների գործերին[58]*: Բագարատը հայտնի էր աստվածաբանական-կրոնական հարցերում բանիմացությամբ, որի մասին վկայում է ասորի գիտնական, սարկավագ Նանան. «Յորժամ ասէ ըմբռնեալ լինէր մեծն և երևելին այն իշխանն հայոց վսեմամիտն, որ եւ զբաւականակն յանձին բերէր ունել զգիտութիւն, որ ի Քրիստոս հաւատոցն. որ եւ նախանձ ոչ փոքրագոյն վասն Քրիստոսի միշտ յանձին կրէր՝ կշտամբել եւ յանդիմանել զհերձուածողացն դասս»*[59]*:*

Հովհաննես Ովայեցու թեկնածությունը պաշտպանել են սպարապետ Սմբատ Բագրատունին և Սյունյաց իշխան Գրիգոր Սուփանը, ովքեր օգնել են նրան զբաղեցնել կաթողիկոսական գահը: Բագարատը հարմար առիթ էր փնտրում Հովհաննեսի փոխարեն կաթողիկոս դարձնել մեկ ուրիշին[60]*: Նա կաթողիկոսից հրաժարվելու և նրան մեկուսացնելու վերաբերյալ հրովարտակ է արձակում՝ ասելով՝ «ի բաց կալ յընդունելոյ զհաւատապետն» ու ի մտի ունենալով «կացուցանել հայրապետ ըստ իւրումն ձեռներիցութեան»*[61]*: Բագարատ Բագրատունուն այս հարցում աջակցում էին որոշ ընդդիմադիր հոգևորականներ, որոնցից ոմանք նույնիսկ անդամ էին «յընտանեաց տան կաթողիկոսարանին»: Զրպարտողները Հովհաննես հայրապետի վերաբերյալ «լեզուաք նենգաւորաք բանս ապիրատս բամբասանաց ի վերայ յաւդէին»: Այս գործի մեջ, հավանաբար, ներքաշված էին Բագարատի թեկնածու եպիսկոպոսը և նրա համախոհները: Չի բացառվում՝ չարախոսները, որոնք կաթողիկոսի դեմ ամբաստանագիր են ներկայացրել Հայոց իշխան Բագարատին, խրախուսվել են հենց վերջինիս կողմից: Հովհաննեսին մեղսագրվող արարքները հստակ հայտնի չեն, սակայն որոշ կցկտուր տեղեկություններ թույլ են տվել Մ. Օրմանյանին ենթադրել, որ մեղադրանքը վերաբերում էր բարոյական ինչ-ինչ խնդրի*[62]*: Կաթողիկոսը հեռանում է Այրիվանք կամ Գեղարդավանք և ապրում այն վայրում, որը կոչվում էր «ընակետղ սրբոյն Սահակայ»: Այստեղից ամբաստանված հայրապետը պատասխանում է Բագարատի հրովարտակին, հիմնավորում է իր անմեղությունն ու նզովում «նանրալեզու հայհոյիչք» անձանց: Սկզբնաղբյուրներն այս իրադարձությունները թվագրում են «ժամանակի իբր ի վեցերորդ ամի իշխանութեանն Բագարատայ և յութերորդ ամի կաթուղիկոսութեանն Յովհաննու», այսինքն՝ 841 թվականին*[63]*:*

---

[58] Тер-Гевондян. 1977, 136. *Այս հանգամանքը վկայում է IX դ. կեսերին հայոց ավագանու՝ երկու բևեռի տրոհվածության մասին (Հայոց պատմություն. 2014, 9):*

[59] *Ակինյան. 1922, 138: Հմմտ. Զամչյան. 1984, 444:*

[60] *Դրասխանակերտցի. 2010, 429: Բագարատի քրիստոնեական բարեպաշտության մասին է վկայում Մուշի Սուրբ Փրկիչ եկեղեցու կառուցման փաստը (Արծրունի եւ Անանուն. 2010, 151):*

[61] *Դրասխանակերտցի. 2010, 429:*

[62] *Օրմանեան. 2001, 1085, §640:*

[63] *Դրասխանակերտցի. 2010, 428, Զամչյան. 1984, 443:*

Կաթողիկոսի նկատմամբ Բագարատ Բագրատունու նախաձեռնած արշավը հայ նախարարական ու հոգևոր շրջանակներում միանշանակորեն չի ընդունվում: Ի պաշտպանություն հայրապետի և ընդդեմ Բագարատի հրովարտակի հանդես են գալիս շատ հոգևորականներ: Կաթողիկոսի պաշտպաններին գլխավորում էին Սմբատ Բագրատունին ու Գրիգոր Սուփան Սյունյաց իշխանը: Բագարատ Բագրատունու նախաձեռնությամբ գումարվում է «համագունդ ի միասին եկեալք» նախարարների և եպիսկոպոսների ազգային-եկեղեցական ժողով, որը պետք է քններ և պարզեր կաթողիկոսին հասցեագրված մեղադրանքները[64]: Ժողովում քննության են դրվում չարախոսների, «մանաւանդ երից արանց՝ որք երևելիքն էին» փաստարկները, և ապացուցվում են Հայոց հայրապետի անմեղությունն ու մեղադրանքների ստահողությունը: Հովհաննես պատմիչի խոսքերով՝ «ստուգագէտ իմացուածիւ» հաստատվում է «նանիր իժաթոյն շրթանց չար հայհոյչացն ստութիւնը»: Ժողովով արդարացվելուց հետո «հաստատեն դարձեալ յաթոռն սրբութեան զայրն Աստուծոյ»:

Կաթողիկոսի աթոռին վերականգնվելը հնարավոր եղավ երկրում արաբների ստեղծած քաղաքական բարդ իրադրության հետևանքով, որը թույլ չտվեց Հայոց իշխան Բագարատ Բագրատունուն, ինչպես հարկն է, զբաղվել այդ հարցերով[65]: Հայր Չամչյանը հաղորդում է, որ ժողովը գումարվել է Երնջակում[66]: «Պատիժք պատուհասի հասին ի վրայ երից բամբասողացն», որոնք գլխավորում էին կաթողիկոսի դեմ արշավը: Իր հովվապետության մնացյալ տարիները Հովհաննեսը Ովայեցին անցկացնում է՝ շրջապատված հարգանքով և պատվով, իսկ եկեղեցին՝ «նորոգապէս պայծառանայր»:

Սկզբնաղբյուրները վկայում են, որ Հովհաննես Դ-ն աթոռակալել է «ամս քսան եւ երկու» (833–855): Նրա աթոռակալության ժամանակաշրջանը համընկնում է Մութասիմ-Պիլլահ (833–842), Աբու-Ջաֆար-Հարուն-ալ-Վաթք-Պիլլահ (842–847) և վերջիններիս եղբայր Մութաֆաքքիլ-Ալալլահ (847–861) խալիֆների գահակալությանը: Չնայած ամիրապետերի տարբեր անվանումներին՝ երեքն էլ հայոց մեջ հիշատակված են միևնույն Ջաֆար անունով, որը, հավանաբար, պայմանավորված էր այդ անվան տարածված լինելու իրողության հետ:

Խալիֆայության պարսից տարրը, իսլամը ընդունելով հանդերձ, փորձում էր հակադրվել արաբներին շիականության դրոշի ներքո: Հովհաննես Ովայեցու հովվապետության շրջանում սկսվում է մի հզոր շարժում, որը պատմության մեջ հայտնի է Խուրամիդյան կամ Բաբեկյան շարժում անունով: Միջնադարյան բոլոր շարժումների նման այն հանդես էր գալիս կրոնական քողի տակ: Շարժման առաջնորդ Ջավիդանի սպանությունից հետո այն գլխավորում է Բաբեկը, ով հայկական սկզբնաղբյուրներում հայտնի է Բաբան անունով: Նա գրավում է Պարսկաստանի հյուսիսարևմտյան ու արևմտյան շրջանները և աշխատում իր իշխանությունը տարածել նաև Հայաստանի արևելյան

[64] *Ե ղ ի ա զ ա ր յ ա ն. 2020, 101:*

[65] *Ա կ ի ն ե ա ն. 1922, 135: Բագարատ Բագրատունու՝ այլ գործերով զբաղվածության մասին վկայող փաստերից մեկը նրա մասնակցությունն է 838 թ. դեպի Անկյուրա և Ամորի արաբների հաղթական արշավանքին (Ե ղ ի ա զ ա ր յ ա ն. 2011, 31):*

[66] *Չ ա մ չ յ ա ն. 1984, 443:*

մասում: Արաբական լծից ազատագրողից նա շուտով վերածվում է ամենախսկական նվաճողի՝ կոտորելով բնակչությանը և ահ ու սարսափ տարածելով: Ինչպես հավաստում է Ստեփանոս Օրբելյանը, Բաբեկը կնության էր առել Վասակ Սյունու դստերը և «առնէր ընդ ձեռամբ իւրով զգաւառն»[67]: Սակայն շուտով սյունեցիները «անհնազանդ» եղան Բաբեկի «հրամանի և օրինաց»: Նրա դեմ ընդվզում է Բաղասական գավառի բնակչությունը, և նա Աբլ Ասադ Աղվանեցու օժանդակությամբ սաստիկ կոտորած է կազմակերպում՝ «մաշեաց մինչ ի կանայս և մատաղ մանկտիս»[68]: Հաջորդ տարին Բաբեկը ներխուժում է Գեղարքունիք, կոտորում մոտ 15000 մարդ, քանդում և ավերում է հռչակավոր ծաղկուն Մաքենյաց վանքը: Հայերը թե՛ Սյունիքում և թե՛ Արցախում կատաղի դիմադրություն են ցույց տալիս պարսիկ ասպատակիչներին: Վարդան Արևելցին հիշում է Աբդհերթ անունով մի պարսիկ զորավարի՝ դարձյալ «ի տանէն Ջահապայ», որը չորս հազարանոց զորքով ասպատակում է Սյունիքը: Նրա դեմ դուրս է գալիս Բաբգեն Սյունին և պարտության մատնում նրան[69]:

Կատարած ավերածությունների և բնակչության կոտորածների համար 837 թ. հայերը ձերբակալում են Բաբեկին: Դրա համար Սահլ Բագրատունին[70] Արմինիայի ու Ատրպատականի կառավարիչ Աֆշինից (835–840) ստանում է մեկ միլիոն դիրհեմ, իսկ նրա որդին, որ Բաբեկին անձամբ տարել և հանձնել էր արաբներին, ստանում է հարյուր հազար դիրհեմ: Բաբեկն իր 3300 յուրայինների հետ տարվում է Բաղդադ և դատապարտվում տանջալից մահվան:

Հովհաննես Ոսկեբերանի աթոռակալության ժամանակաշրջանում արդեն ուրվագծվում էր արաբական տիրապետության քայքայման հեռանկարը, ուժեղանում էին ներքին երկպառակությունները: Մութասիմ խալիֆն անգամ իր մայրաքաղաքը Բաղդադից տեղափոխում է Սամառա: Տեղական իշխանությունները ձգտում էին անկախանալ, և ավատատիրությունն իր տրոհիչ էությամբ տիրապետող էր դառնում ամբողջ տերության տարածքում: Օգտվելով ստեղծված իրավիճակից՝ հայկական նախարարությունները հաստատում են իրենց իշխանությունը երկրի տարածքի գերակշիռ մասի վրա: Նրանք իրենց այնքան ուժեղ են զգում, որ անգամ պատերազմներ են մղում արաբ զորավարների դեմ՝ զենքով ապացուցելով իրենց իրավունքը հայրենական տիրույթների նկատմամբ: Այդ խառնակ ժամանակներում իրար ետևից փոխվում են ոստիկանները: Բաբեկի ապստամբության ժամանակ խալիֆայությունը հնարավորություն չուներ Հայաստանով լրջորեն զբաղվել, ուստի երկիրը կրկին հնազանդեցնելու ուղղությամբ լուրջ քայլ ձեռնարկվեց միայն 849 թ.:

---

[67] Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական. 1861, 115, Կ ա ղ ա ն կ ա տ ո ւ ա ց ի. 1983, 326:

[68] Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական. 1861, 115, Կ ա ղ ա ն կ ա տ ո ւ ա ց ի. 1983, 326:

[69] Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի. 1862, 80:

[70] Ա բ ո ւ Հ ա ն ի ֆ ա Ա լ - Դ ի ն ա վ ա ր ի. 2005, 218, Յ ա կ ո ւ բ ի. 2005, 387: Սմբատի որդի Սահլ (Սահլ իբն Սինբաթ) կամ Սունբաթ, արաբ պատմիչները նրա անվանը կցում են «ալ-արմանի»՝ հայազգի բառը: Ն. Ադոնցը կարծում է, որ նրա հայրը՝ Սմբատը, Բագրատունի է (Ա դ ո ն ց. 2006, 517):

849 թ. Մութավաքքիլ-Ալալլահ խալիֆը[71] (847–861) «զաւրաւք բազմաւք» Հայաստան է ուղարկում «զոմն ի յաւագ նախարարացն» Աբու Սաիդ Մուհամմադ իբն Յուսուֆին (850–851), որին հայ մատենագիրները հիշում են Աբուսեթ անվամբ: Արքունիքը նրան այնտեղ էր գործուղել հարկային նոր խստություններ կիրառելու «առաքելությամբ»: Մոտ կես դար ներքին երկպառակություններից տկարացած և հարկային եկամուտներից զրկված՝ խալիֆայությունը փորձում է բարելավել իր ֆինանսական վիճակն ու վերականգնել դիրքերը[72]: Տարոն-Սասունի իշխան Բագարատ Բագրատունին և Վասպուրականի իշխան Աշոտ Արծրունին փորձում են հարցը լուծել խաղաղ ճանապարհով, և կանխել Աբուսեթի մուտքը Հայաստան: Բագարատի գլխավորած հայ իշխանների պատվիրակությունը սահմանագլխում հանդիպում է Աբուսեթին: Վերջինիս ոսկի, արծաթ ու թանկարժեք նվերներ են մատուցում և խոստանում վճարել արքունի հարկերը, եթե արաբները համաձայնեն առանց պատերազմի հեռանալ Հայաստանի սահմաններից: Այստեղ ուշադրության է արժանի այն, որ արաբները, իրենց սովորության համաձայն, թեև որոշել էին դավադրության և խաբեության միջոցով պառակտել հայերի ուժերը և իրենց կողմը գրավել աչքի ընկնող գործիչներին, սակայն տեսնելով նրանց «անլոյծ միաբանութիւն ուխտի» վճռականությունը՝ ստիպված են լինում կեղծել և քողարկել իրենց իսկական մտադրությունները: Հայերը, որ նախապես պատրաստել էին հարկերը, անմիջապես «տան տանել նմա զհարկս եւ հասս արքունի, եւ դարձուցանեն զնա ընդ նոյն ուստի եկն»[73]: Աբուսեթը, ոչ այնքան իրեն մատուցված նվերներից շլացած, որքան հայ նախարարների համախմբվածությունից վախենալով, շտապ վերադառնում է Բաղդադ[74]: Մինչ այդ նա Աղձնիքի և Արզնի էմիր, Բագարատ Բագրատունու քրոջ ամուսին Մուսա իբն-Զուրարային նշանակում է Հայաստանի կառավարիչ և ուղարկում Տարոն՝ հարկերը հավաքելու ու կոտրելու հայերի դիմադրական ուժը: Մուսան ներխուժում է Տարոն և հասնում Բագարատի ձմեռանոց՝ Մուշ: Քանի որ թշնամու ուժերը մի քանի անգամ գերազանցում էին հայերին, Բագարատը օգնության է կանչում Աշոտ Արծրունուն: Վերջինս իր եղբայրների ու մարտական պատրաստականությամբ երկու տասնյակ այլ նախարարների հետ շտապում է Տարոն՝ Բագարատին օգնության: Հայ նախարարների միացյալ զորքը ուժգին ջարդ է տալիս թշնամուն ու հալածելով՝ հասնում մինչև Բաղեշ:

Բացի Մուսայից, Աբուսեթը հատուկ ծրագրով Հայաստան է ուղարկում նաև Ալա-Ծովափին, ով Մանազկերտի կայսիկ ցեղից էր: Վերջինիս հանձնարարված էր ասպատակել Վասպուրականը, կողոպտել ու կոտորել բնակչությանը, հարկերը գանձել առավելագույն չափով[75]: Արաբական զորքերի գլուխ անցած՝ Ալա-Ծովափին Վասպուրականում «գերփէր, աւերէր, յափշտակէր կապուտ կողոպուտ գործէր ընչից եւ ստացուածոց, յափշտակէին զայր եւ զկին

---

[71] *Իր չարագործությունների և գազանային բռնակալության համար այնքան վատ համբավ էր ստացել, որ նրան անվանել են «արաբների Ներոն» (Լ ե ո. 1967, 427):*

[72] *Ն ա լ բ ա ն դ յ ա ն. 1956, 121:*

[73] *Ա ր ծ ր ո ւ ն ի եւ Ա ն ա ն ո ւ ն. 2010, 141:*

[74] *Մ ե լ ի ք-Բ ա խ շ յ ա ն. 1968, 354:*

[75] *Ա ր ծ ր ո ւ ն ի եւ Ա ն ա ն ո ւ ն. 2010, 142, 144:*

եւ զժառանգութիւն նոցա: Առնէր ասպատակ եւ ի կողմն Անձաւացեաց տէրութեանն, եւ անտի եւս առնուին աւար ի պատճառս ռոճկաց պիտոյից այրուձիոյն»[76]: Նրա հարկային բռնությունները զսպելու անհաջող փորձերը հայերին մղում են վճռական գործողությունների: Արճուճ գյուղի մոտ Արծրունյաց իշխան Աշոտն իր զորքով հարձակվում ու կոտորում է Ակա-Ծովափիի հրոսակախումբը:

Տարոնի և Վասպուրականի ապստամբությունները վերջնականապես ճնշելու ու արաբների խայտառակ պարտության վրեժը լուծելու համար Մութավաքքիլն Աբուսեթին երկրորդ անգամ է ուղարկում Հայաստան: Սակայն Աբուսեթը ճանապարհին մահանում է, և զորքերի հրամանատարությունը հանձնվում է նրա որդուն՝ Յուսուֆին, որը Հայաստան է հասնում 851 թ.: Մտնելով Աղբակ գավառ՝ նա գրավում է Հադամակերտը: Աշոտը հարկերը կանոնավոր և անխափան վճարելու հավաստիացումներ պարունակող գրությամբ և մեծ ընծաներով նրա մոտ է ուղարկում իր մորը՝ Հռիփսիմե տիկնոջը: Արծրունյաց տիկնոջ դիվանագիտական առաքելությունը դրական արդյունք է տալիս, և Յուսուֆը զորքով շարժվում է Խլաթ: Ինչպես վկայում է Թովմա Արծրունին, արտաքուստ բարեկամական վերաբերմունք ցույց տալով՝ նա ձերբակալում է Բագարատին և «զամենայն ազգատոհմն նորա», որոնց շղթայակապ ուղարկում է Սամառա[77]: Այս փաստը հիշելով՝ բարձրաստիճան հոգևորական Հովհաննես Դրասխանակերտցին, հավատարիմ դասային համերաշխության կանոնին, առիթը բաց չի թողնում շեշտելու, որ դա Հովհաննես Ովայեցի հայրապետի նկատմամբ Բագարատի անարդարացի վերաբերմունքի արժանի պատասխանն էր. «Եւ որ սակս սրբոյ հայրապետին զանիրաւն խորհէր, աստ ապա զիրաւացի պատուհաս վրէժխնդրութեան ըստ արժանին յանձին իւրում կրէր»[78]: Բագարատին ձերբակալելուց հետո Յուսուֆն ասպատակում և տակնուվրա է անում Տուրուբերանի ու Աղձնիքի շրջանները: Արաբական զորքերի ավերածությունները համաժողովրդական ցասում են առաջացնում հայ բնակչության մեջ: Ապստամբության առաջին ազդանշանը տալիս են Սասունի լեռնային շրջանի՝ Խութի գյուղացիները: Յուսուֆի դեմ եղած դժգոհությունն ու վրիժառության զգացումն ավելի էր մեծանում այն ժամանակ, երբ մարդիկ ոտնահարված էին տեսնում իրենց կրոնական զգացմունքները: Արաբ պատմիչների վկայությամբ՝ ապստամբությունը նախապատրաստված էր հայ ազնվականների կողմից, որոնք հենվում էին ազատագրական պայքարի մեծ փորձ ունեցող քաջարի խութեցիների վրա[79]: Խութի գյուղացիները՝ Հովնանի գլխավորությամբ, հարձակվում են Մուշում կենտրոնացած արաբների վրա: Հայերի վճռական հարձակումից սարսափած Յուսուֆը փախչում և թաքնվում է Մուշի եկեղեցում, «որ յանուն Փրկչին մերոյ շինեալ էր յիշխանէն Բագարա-

---

[76] *Արծրունի եւ Անանուն. 2010, 144:*

[77] *Արծրունի եւ Անանուն. 2010, 150, Բալազուրի. 2005, 282, Յակուբի. 2005, 393: Այս տեղեկատվությունն առկա է հայկական և արաբական բազմաթիվ սկզբնաղբյուրներում: Բագարատի երկու որդիներին՝ Աշոտին և Դավիթին, հաջողվում է փախչել ու ապաստանել Սասունի լեռներում (Դրասխանակերտցի. 2010, 431):*

[78] *Դրասխանակերտցի. 2010, 430:*

[79] *Բալազուրի. 2005, 282:*

*տայ, ի ծախս մեծամեծ գանձուց իբրեւ Յ. (300) հազարաց»[80]: Սակայն հենց այդտեղ Հովնանի մարդիկ սպանում են չարագործ Յուսուֆին: Հայերը պարտության են մատնում արաբներին, ազատում գերիներին: Բալազուրին վկայում է, որ Յուսուֆի սպանությունից հետո «նրա ճամբարում եղած ամեն ինչը տարան»[81]: Մուշի հիշյալ դեպքերը տեղի են ունեցել 851–852 թթ. ձմռանը: Խութեցիների հաղթանակը մեծ ոգևորություն է առաջացնում Հայաստանի մյուս շրջանների հայության մեջ և անհանգստացնում արաբական իշխանություններին: Ընդվզումները ճնշելու և Հայաստանը կրկին հպատակեցնելու համար շուտով Մութավաքքիլ խալիֆն այստեղ է ուղարկում ծագումով թուրք, բիրտ ու վայրագ զորավար Բուղա Շարաբին: Բուղայի մեծաքանակ զորքի ներխուժումը Հայաստան իրարանցում և խուճապ է առաջացնում հայ ապստամբների շարքերում: Հայերի մեջ սկված վարանումն ու անմիաբանությունը քայքայում և թուլացնում են նրանց ուժերը: Նախկինում եղած փոխադարձ վստահությունը տեղի է տալիս անվստահության և անհավատարմության: Արծրունի պատմիչը ցավով է արձանագրում այդ ժամանակ ստեղծված մթնոլորտը. «Այսպէս տակաւին ի բազումս քայքայեալ լինէր միաբանութիւն աշխարհիս եւ իւրաքանչիւր ոք այր զընկերէ եւ զեղբաւրէ իւրմէ ի չարիս խոկային: Եւ թուղթս եւ դեսպանս առ թագաւորն յղէին ծածուկս ի միմեանց. այլ եւ ընդ միմեանս արկանէին բանս քսութեան, եւ ոչ ոք մնայր գէթ երկու ի միասին»[82]: Հայերի անմիաբանությունը ձեռնտու էր արաբներին, և Բուղան սրի ու ավերածության է մատնում երկիրը. ամենից առաջ դաժանորեն պատժում է Տարոնի և Սասունի բնակիչներին: Հայ նախարարներն ու ապստամբության առաջնորդները կալանավորվում և ուղարկվում են Սամառա, որտեղ նրանցից շատերն իրենց կյանքը փրկելու համար մուսուլմանություն են ընդունում: Արաբ պաշտոնյաներն ու զինվորները սեփականացնում էին հայերի հողատարածություններն ու ունեցվածքը և հաստատվում այնտեղ: Արաբական զորքերին հետևող վերաբնակիչներն արագորեն բնակեցնում էին հայաթափված բնակավայրերը: Արծրունյաց պատմիչը հիշատակում է Բուղայի Ժիրաք անունով հրամանատարին, որը ասպատակում է Ռշտունիքն ու Տոսպը: Ժիրաքը, բնակչությանը զանգվածաբար կոտորելուց ու աքսորելուց բացի, «զչէնս եւ զաւանս եւ զագարակս հրձիգ արարեալ, անապատ կացուցանեն ի մարդոյ եւ յանասնոյ»: Պատմիչը հիշում է Մարդպետականի եպիսկոպոս Սահակի եղբորը, որը հրաժարվում է ուրացությունից և դիսատվում: Ժիրաքը հրկիզում է Արտամետի եկեղեցին: Բուղան գերիներին ազատություն էր շնորհում միայն իսլամ ընդունելու պայմանով: Շատերը մերժեցին կրոնափոխությունը, և Բուղան «տանջեաց զնոսա գանիւ»: Մատենագիրն անվանապես հիշում է անդրդվելի մնացած Գևորգ Ակեացուն և Խոսրով Գաբեղյանին[83]:

Բուղան Դվինում բանտարկել էր 150 ազնվազարմ երիտասարդի: Արաբ զորավարը փորձում է նրանց իսլամացնել, սակայն բանտային ծանր պայմանները, կոտանքներն ու հալածանքներն արդյունք չեն տալիս: Բուղան նրանց դիսատում է: Վերջում մնում է յոթ երիտասարդ, որոնք ևս «պակեցան ի

[80] Արծրունի եւ Անանուն. 2010, 151:
[81] Բալազուրի. 2005, 282:
[82] Արծրունի եւ Անանուն. 2010, 153:
[83] Արծրունի եւ Անանուն. 2010, 168:

Քրիստոսէ»: Պատմությունը պահպանել է նրանցից չորսի անունը՝ Ատոմ Անձևացի, Մլեհ Վարաժնունի, Գևորգ Բողկացի և Վասակ Ակեացի[84]: Ոչ տանջանքները և ո՛չ խոստումները չեն ընկճում նրանց, ու նրանք կտրականապես հրաժարվում են իսլամ ընդունելուց, որոնց նահատակությունը տեղի է ունեցել հայոց 302 թ. մեհեկան ամսի 25-ին. այն համապատասխանում է 853 թ. նոյեմբերի 17-ին[85]: Դվինում վկայվածները կոչվել են Ատոմյանք՝ Ատոմ Անձևացու անվամբ և անգամ՝ Նոր Ատոմյանք՝ առաջիններից տարբերվելու համար: Հովհաննես կաթողիկոսի կոնդակով մեհեկանի 25-ը հայտարարվում է Նոր Ատոմյանց նահատակների հիշատակի օր:

IX դ. 30-ական թվականներին՝ Հովհաննես Ովայեցու գահակալության ժամանակաշրջանում, Հայաստանում Թոնդրակյան աղանդի ձևով սկզբնավորվում է մի շարժում, որը զարգացած ավատատիրության դարաշրջանում շուրջ երկու դար ցնցում է Հայաստանը: Այն ուղղված էր Հայոց եկեղեցու դեմ, իսկ նրա առաջնորդ Սմբատ Զարեհավանցին, Գրիգոր Մագիստրոս Պահլավունու խոսքերով, «ի հիմաց սասանեց առաքյալներին և մարգարեներին»[86]: Սկզբնաղբյուրներում հստակ վկայություններ չկան աղանդի հիմնադիր Զարեհավանցու գործունեության մեկնարկի ժամանակի մասին, ինչն առիթ է տվել ուսումնասիրողներին աղանդի սկիզբ համարել IX դ. առաջին կեսը[87], նույն դարավերջը և հաջորդ դարասկիզբը: Ժամանակագրական շփոթի սկզբնաղբյուրներից մեկն Ասողիկի վկայությունն է. խոսելով Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսի գահակալության մասին, որը տեղի է ունեցել 898 թ.՝ նա գրում է. «Յաւուրս սորա երեւեցաւ Սմբատ Թոնդրակաց առաջինն ի Զարեհաւան գեղջէ, ի Ծաղկոտն գաւառէ, հակառակ ամենայն քրիստոնէական կարգաց»[88]: Սակայն այս տեղեկությունը հերքվում է ծանրակշիռ այլ վկայություններով: Ըստ XI դ. գիտնական, ռազմական և քաղաքական գործիչ Գրիգոր Մագիստրոսի՝ Սմբատ Զարեհավանցին «երևեցաւ յաւուրս տեառն Յովհաննիսի և Սմբատայ Բագրատունւոյ»[89]: Իր թղթերում Մագիստրոսը հստակեցնում է, թե ում նկատի ունի «տեառն Յովհաննիսի» և «Սմբատայ» անունների ներքո: XI դ. 50-ական թվականների սկզբին իր մի թղթում դիմելով Թոնդրակյան ղեկավարներին՝ Մագիստրոսն ասում է. «... զհարիւր և զեօթանասուն ամ երեքտասան քահանայապետք Հայոց Մեծաց, նոյնչափ և Աղուանիցն և բիւր եպիսկոպոսք և անթիւ քահանայք և սարկաւագունք բողոքեցին ձեզ և ոչ լուայք, խօսեցան և յանդիմանեցին և ոչ պատկառեցայք, անիծեցին և արտաքսեցին և ոչ զղջացայք»[90]: Նույն ժամանակներում գրած մեկ այլ թղթում նա փաստում է, թե Թոնդրակյաններն «աւելի քան զերկերիւր ամ ապականեալ

---

[84] Արծրունի եւ Անանուն. 2010, 192:

[85] Արծրունի եւ Անանուն. 2010, 193, Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի. 1862, 80, Սամուէլ Անեցի եւ շարունակողներ. 2014, 165, Օրմանեան. 2001, 1102, §649: Համաձայն անշարժ տոմարի այն դրվել է մարտի 3-ին (Զամչյան. 1984, 448):

[86] Մագիստրոսի թղթերը. 1910, 153:

[87] Այս տեսակետն առաջին անգամ հայտնել է Մ. Զամչյանը (Զամչյան. 1984, 884):

[88] Ասողիկ. 2010, 742:

[89] Մագիստրոսի թղթերը. 1910, 153:

[90] Մագիստրոսի թղթերը. 1910, 154:

զաշխարհս ամենայն, արձանացուցին զայնպիսի ատրուշան իւրեանց վաւաշ մոլութեանն»[91]: Սրան համապատասխանում է Մագիստրոսի մյուս վկայությունը, երբ շեշտում է, թե մինչև իր ժամանակն ավելի քան 15 կաթողիկոս բանադրել է թոնդրակյաններին[92]: Նշելով թոնդրակյանների՝ շուրջ 200-ամյա գոյության և ավելի քան 15 կաթողիկոսից նրանց բանադրված լինելու մասին՝ Մագիստրոսը նկատի ուներ աղանդի կազմավորման և հայ կաթողիկոսների՝ նրանցից սահմանազատվելու սկզբնակետը[93]: Թոնդրակյանների սկզբնավորումը նա տեսնում է Հովհաննես Ովայեցի կաթողիկոսի (833–855) և նրան ժամանակակից Սմբատ Բագրատունի սպարապետի (822–855) ժամանակաշրջանից:

Հովհաննես Դ հայրապետի աթոռակալության վերջին տարիներին Թոնդրակյան աղանդի ձևով հայ ժողովրդի հոգևոր անվտանգությանը սպառնացող մարտահրավերին գումարվել էին նաև թուրք զորավար Բուղայի ավերածությունները, որոնք մեծ տառապանք էին պատճառում հայ ազգաբնակչությանը: Չնայած ծեր տարիքին՝ ժողովրդի հոգսերով ապրող հովվապետը շրջում էր Հայաստանի գավառներում, գոտեպնդում ու հուսադրում ժողովրդին, փորձում էր ուրացությունից հետ պահել նախարարներին: Նոր Ատոմյանների նահատակությունից (853) մոտ մեկուկես տարի հետո՝ 855 թ.՝ Գեղարքունիքի Սոթք գավառում՝ Մաքենոցաց վանքում գտնվելու ժամանակ, Հովհաննես կաթողիկոսը վախճանվում է:

Եզրակացություն

Այսպիսով՝

– VIII–IX դարերում կառուցվածքային փոփոխությունների է ենթարկվում Հայոց եկեղեցու տնտեսական հիմքը կազմող ավատական հողատիրությունը, նոր ձևավորված վանքերը ստեղծում են իրենց ենթակառուցվածքները, ձեռք բերում ընդարձակ հողատարածություններ: Դավանաբանական վեճերի, իսլամի կողմից տեղի ունեցող գրոհների պայմաններում եկեղեցին ամրապնդում է իր տեսական հիմքերը, ստեղծում ինքնուրույն օրենսդրություն: Հայոց եկեղեցու ծիսադավանական և աստվածաբանական սկզբունքների հստակ սահմանումը նպաստում է ազգային ու կրոնական ինքնության գիտակցման զարգացմանը:

– Քրիստոնյաների շարունակական կրոնական հալածանքները բարձրակետին են հասնում IX դ. կեսին՝ Մութավաքքիլ խալիֆի օրոք: Հայ եկեղեցական գույքի և ունեցվածքի բռնագրավումներին զուգահեռ՝ առաջնային է դառնում հայերի հավատափոխությունը, որի վկայությունը, պատմիչների մոտ պահպանված տեղեկություններից բացի, այդ շրջանում վկայաբանական գրականության լայն տարածվածությունն է:

– IX դ. առաջին կեսին Հայաստանում տեղի են ունենում եկեղեցական-կրոնական լուրջ գործընթացներ: Ասորի միաբնակ եկեղեցու հեղինակավոր ներկայացուցիչ Նանա սարկավագի՝ Հայաստան ժամանելու փաստից ենթադրվում է, որ փորձ էր կատարվում ստեղծել հայ և սիրիական եկեղեցիների

[91] *Մագիստրոսի թղթերը. 1910, 65:*
[92] *Մագիստրոսի թղթերը. 1910, 169:*
[93] *Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1957, 338:*

միություն, ձևավորել ընդհանուր «ռազմաճակատ» քաղկեդոնականության դեմ:

– Դավիթ Բ Կակաղեցու օրոք Հայաստանի ինքնավարության վերականգնման ոչ դյուրին ընթացքն ուղեկցվում է խալիֆայական իշխանության գերակայությունը չճանաչող տեղական կառավարիչների ապստամբություններով, որոնք մեծ ավերածություններ են պատճառում Հայաստանին: Նրա օրոք արաբների կրոնական հալածանքներին զուգահեռ՝ ակտիվանում են քաղկեդոնականների ոտնձգությունները Հայոց եկեղեցու հետևորդների նկատմամբ:

– Հովհաննես Դ Ոլայեցի կաթողիկոսն ընտրվել է առանց «իշխան իշխանաց հայոց» Բագարատունու համաձայնության: Պաշտոնանկ արված, այնուհետև վերականգնված կաթողիկոսը խստապահանջ հետևողականությամբ աշխատել է կանխել հայ նախարարների հավատուրացության դեպքերը, պահանջել հետևել քրիստոնեական պատվիրաններին: Նրա աթոռակալության ժամանակաշրջանում արդեն ուրվագծվում էր արաբական տիրապետության քայքայման հեռանկարը, ուժեղանում էին ներքին երկպառակությունները: IX դ. կեսին Հայաստանում ծայր է առնում ազատագրական շարժում հարկահավաքությունից արաբներին հեռացնելու պահանջով, որը տանում էր ինքնավարության վերականգնմանը: Հայկական նախարարություններն իրենց իշխանությունն են տարածում երկրի տարածքի գերակշիռ մասի վրա: Նրանք իրենց այնքան ուժեղ են զգում, որ անգամ պատերազմներ են մղում արաբ զորավարներ Աբուսեթի, Յուսուֆի և Բուղայի դեմ՝ զենքով ապացուցելով իրենց իրավունքը հայրենական տիրույթների նկատմամբ:

Վարդան Ալեքսանյան – պ. գ. թ., դոցենտ, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դասախոս: Գիտական հետաքրքրությունը՝ Հայոց եկեղեցու պատմությունն ավատատիրության դարաշրջանում: Հեղինակ է 3 ուսումնամեթոդական ձեռնարկի և շուրջ 20 հոդվածի: vardanalexanyan406@gmail.com

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբու Հանիֆա Ալ-Դինավարի. 2005, Մատյան երկարապատում ավանդությունների (Քիթաբ ալ-Ախբար ալ-Թիվալ), Երևան, ԵՊՀ հրատ., 703 էջ:

Աբու Յուսուֆ. 2005, Հարկերի մատյան (Քիթաբ ալ-Խարաջ), Երևան, ԵՊՀ հրատ., 703 էջ:

Ադոնց Ն. 2006, Երկեր, հ. Ա, Երևան, ԵՊՀ հրատ., 648 էջ:

Ալիշան Ղ. 1890, Այրարատ, Վենետիկ, Սուրբ Ղազարի տպ., 590 էջ:

Ակինեան Ն. 1910, Կիւրիոն կաթողիկոս վրաց. Պատմութիւն հայ-վրական յարաբերութեանց եոթներորդ դարու մեջ, Մխիթարեան տպարան, Վիեննա, 315 էջ:

Ակինյան Ն. 1922, Թէոդորոս Ապիկուռա եւ Նանա ասորի Հայաստանի մէջ եւ Նանայի Յովհաննու մեկնութեան հայերէն թարգմանութիւնը. – Մատենագրական հետազօտութիւններ, Քննութիւն և բնագրեր, հ. Ա, Վիեննա, Մխիթարեան տպարան, 232 էջ:

Բալազուրի. 2005, Երկրների նվաճումը (Ֆուտուհ ալ-Բուլդան), ԵՊՀ հրատ., 703 էջ:

Գրիգոր Մագիստրոսի թղթերը. 1910, բնագիրն յառաջաբանով և ծանոթագրութիւններով առաջին անգամ ի լոյս ընծայեց Կ. Կոստանեանց, Աղէքսանդրապօլ, Տպարան Գէորգ Մաճոյեանցի, 352 էջ:

Գրիգորյան Գր. 1973, Սյունիքի վանական կալվածատիրությունը IX–XIII դարերում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 267 էջ:

Եղիազարյան Ա. 2020, Ազգային-եկեղեցական ժողովները Հայաստանում Դ-ԺԱ դդ., «Սահմանադրական մշակույթ» միջազգային վերլուծական կենտրոն, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 114 էջ:

Եղիազարյան Ա. 2010, Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանը, ԵՊՀ հրատ., Երևան, 186 էջ:

Եղիազարյան Ա. 2011, Հայ Բագրատունիների տերությունը (885–908), Երևան, ԵՊՀ հրատ., 392 էջ:

Թովմա Արծրունի եւ Անանուն. 2010, Պատմութիւն տանն Արծրունեաց, Մատենագիրք հայոց, հ. ԺԱ, Ժ դար, Պատմագրութիւն, Գիրք Ա, Լիբանան–Անթիլիաս, ԵՊՀ հրատ., 795 էջ:

Լեո. 1967, Երկերի ժողովածու, հ. Բ, Երևան, «Հայաստան» հրատ., 786 էջ:

Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց. 1813, հ. Դ, Վենետիկ, Սուրբ Ղազարի տպ., 491 էջ:

Հայ ժողովրդի պատմություն. 1984, հ. Բ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 687 էջ:

Հովհաննիսյան Ա. 1957, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. Ա, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 524 էջ:

Հովսեփյան Գ. 1913, Քարտեզ հայ հնագրության, «Շողակաթ», Վաղարշապատ, 218 էջ:

Մանանդյան Հ. 1978, Երկեր, հ. Բ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 646 էջ:

Մարկուարտ Յ. 1912, Վրական Բագրատունեաց ծագումը.– «Հանդէս ամսօրեայ» (Վիեննա), թիւ 6, էջ 333–340, 1913, թիւ 5, էջ 281–293, թիւ 8, էջ 463–475:

Մելիք-Բախշյան Ստ. 1968, Հայաստանը VII–IX դարերում, Երևան, «Միտք» հրատ., 424 էջ:

Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն հայոց. 1860, Մ. Էմին, Մոսկվա, Լազարեան ճեմարանի տպ., 69 էջ:

Մովսէս Կաղանկատուացի. 1983, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 383 էջ:

Յակոբի. 2005, Պատմություն (Տարիխ), Երևան, ԵՊՀ հրատ., 703 էջ:

Յայսմաւուրք. 1706, Կ. Պոլիս, Գրիգոր դպրի տպ., Արացի ժե, Յունվարի իբ:

Յովհաննէս Դրասխանակերտցի. 2010, Պատմութիւն հայոց, Մատենագիրք հայոց, ԺԱ հատոր, Ժ դար, Պատմագրութիւն, գիրք Ա, Անթիլիաս–Լիբանան, ԵՊՀ հրատ, 795 էջ:

Յովսէփեանց Գ. 1931, Մխիթար Այրիվանեցի, նորագիւտ արձանագրութիւն եւ երկեր, Երուսաղէմ, 23 էջ:

Նալբանդյան Հ. 1956, Արաբացի ոստիկանները Հայաստանում. – ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» հաս. գիտ., № 8, էջ 105–124:

Չամչյան Մ. 1984, Հայոց պատմություն, հ. Բ, Երևան, ԵՊՀ հրատ., 1060 էջ:

Ռենու Շ. 2008, Հայոց ծիսական տարվա զարգացումը VIII–XII դարերում ծիսական մեկնությունների և գրքերի հենքի վրա. – ՊԲՀ, № 3, էջ 77–102:

Սամուէլ Անեցի եւ շարունակողներ. 2014, Ժամանակագրութիւն, աշխատ. Կ. Մաթևոսյանի, Երևան, «Նաիրի» հրատ., 502 էջ:

Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական. 1861, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 386 էջ:

Ստեփանոս Տարաւնեցի Ասողիկ. 2010, Պատմութիւն Տիեզերական. – «Մատենագիրք հայոց», հ. ԺԵ, Ժ դար, Պատմագրութիւն, գիրք Բ, Անթիլիաս–Լիբանան, ԵՊՀ հրատ., 893 էջ:

Տեր-Ղևոնդյան Ա. 1977, Արմինիայի ոստիկանների ժամանակագրությունը. – ՊԲՀ, № 1, էջ 117–128:

Օրմանեան Մ. 2001, Ազգապատում, հ. Ա, Էջմիածին, Մայր Աթոռ, 1870 էջ:

Ֆասմէր Ռ. 1929, ժամանակագրութիւն Հայաստանի ոստիկաններու Ալ-Ամին եւ Ալ-Մամուն խալիֆների օրոք. – «Հանդէս ամսօրեայ» (Վիեննա), թիւ 10–11, էջ 650–667:

Гиргас В. 1865, Права христиан на Востоке по мусульманским законам. СПб., В печатне В. Головина, 116 с.

Марр Н. 1905, Аркаун, монгольское название армян в связи с вопросом об армянах-халкедонитах. – «Византийский временник», 68 с.

Тер-Гевондян А. 1977, Армения и Арабский халифат. Ереван, Изд. АН Арм ССР, 320 с.

Юзбашян К. 1988, Армянские государства эпохи Багратидов и Византия IX–XI вв. М., «Наука», 300 с.

Tritton A. S., 1970, The Caliphs and their Non-Muslim Subjects. London, 1970, 240 p.

ЦЕРКОВЬ В ПЕРИОД ВОССТАНОВЛЕНИЯ ВНУТРЕННЕЙ АВТОНОМИИ АРМЕНИИ
(Первая половина IX века)

ВАРДАН АЛЕКСАНЯН

Р е з ю м е

Ключевые слова: Армянская церковь, арабские правители, монастырь, религиозные гонения, Багарат Багратуни, Давид II Какахеци, Ованнес IV Оваеци, Мутаваккил, вероотступничество, восстание, тондракийское движение, мученичество.

В VIII–IX веках феодальное землевладение, составляющее экономическую основу Армянской церкви, претерпевает структурные изменения. Вновь строящиеся монастыри формируют свою инфраструктуру, приобретают большие участки земли. В условиях межконфессиональных споров и нападок со стороны ислама церковь укрепляет свои теоретические основы и создает собственное законодательство. Четкое определение ритуально-религиозных и богословских принципов Армянской церкви способствует развитию осознания национальной и религиозной идентичности.

Продолжающиеся религиозные гонения на христиан достигают апогея в середине IX века при халифе Мутаваккиле. Параллельно с конфискацией имущества и драгоценностей армянской церкви первостепенным становится изменение вероисповедания армян.

В первой половине IX века в Армении происходят серьезные церковно-религиозные процессы. Прибытием в Армению одного из авторитетных представителей ассирийской церкви – дьякона Наны – предпринималась попытка создать Союз армянских и сирийских церквей.

Во время правления католикоса Давида II Какахеци нелегкий процесс восстановления автономии Армении сопровождается восстаниями местных правителей, не признающих верховенство халифатской власти. Параллельно с религиозными гонениями арабов активизируются посягательства халкидонитцев на последователей Армянской церкви.

Католикос Ованес IV Оваеци был избран без согласия Великого князя армян Багарата Багратуни. Свергнутый, затем восстановленный Католикос со строгой последовательностью старался предотвратить вероотступничество армянских князей, требовал следовать христианским заветам. В период его правления уже наметилась перспектива распада арабского господства. В середине IX века армянские князья распространяют свою власть на подавляющую часть территории страны и восстанавливают автономию.

Вардан Алексанян – к. и. н., доцент, преподаватель кафедры истории Армении и обществоведения Иджеванского филиала ЕГУ. Научные интересы: история Армянской церкви в период феодализма. Автор 3 учебно-методических пособий и около 20 статей. vardanalexanyan406@gmail.com

ARMENIAN CHURCH IN THE PERIOD OF RESTORATION OF THE INTERNAL AUTONOMY OF ARMENIA
(First half of the 9th century)

VARDAN ALEXANYAN

S u m m a r y

Key words: Armenian church, Arab rulers, monastery, religious persecution, Bagarat Bagratuni, David II Kakaghetsi, Hovhannes IV Ovaetsi, Mutavaqqil, apostasy, rebellion, Tondrakian movement, martyrdom.

In the VIII-IX centuries, feudal landownership, which constituted the economic basis of the Armenian Church, underwent structural changes. Newly built monasteries form their infrastructure and acquire large plots of land. In the context of interfaith disputes and attacks from Islam, the church strengthens its theoretical foundations and creates its own legislation. A clear definition of the ritual-religious and theological principles of the Armenian Church contributes to the development of awareness of national and religious identity.

The ongoing religious persecution of Christians culminates in the middle of the 9th century under Caliph Mutawakkil. In parallel with confiscation of the

property and jewelry of the Armenian Church, the change of religious confession of Armenians becomes paramount.

In the first half of the 9th century, serious ecclesiastical and religious processes took place in Armenia. With the arrival in Armenia of one of the authoritative representatives of the Assyrian church, deacon Nana, an attempt was made to create a Union of Armenian and Syrian churches.

During the reign of Catholicos Davide II Kakahetsi, the difficult process of restoring the autonomy of Armenia is accompanied by uprisings of local rulers who do not recognize the supremacy of the caliphate power. In parallel with the religious persecution of Arabs, encroachments of the Chalcedonites on the followers of the Armenian Church are intensifying.

Catholicos Hovhannes IV Ovaetsi was elected without the consent of the Grand Duke of Armenians Bagarat Bagratuni. The overthrown and then restored Catholicos tried to prevent the apostasy of the Armenian princes with strict consistency and demanded to follow Christian precepts. During his reign, the prospect of the collapse of Arab domination was already outlined. In the middle of the 9th century, the Armenian princes extended their power over the vast majority of the country's territory and restored autonomy.

Vardan Alexanyan – Candidate of Historical Sciences, Associate Professor, Lecturer at the Department of Armenian History and Social Science, Branch of YSU in Ijevan. Scientific interests: History of the Armenian Church in the Middle Ages. Author of 3 educational-methodical manuals and about 20 scientific articles. vardanalexanyan406@gmail.com